ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ԱՊՐԻԼ-ՀՈՒՆԻՍ, 2017 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՆԱԽԱԲԱՆ

2017 թվականի երկրորդ եռամսյակն առավելապես աչքի ընկավ հանրային իրազեկման միջոցառումներով, որոնց շարքում առանձնապես կարևորվեց մի շարք մարզային այցելությունների կազմակերպումը: Հաշվետու ժամանակահատվածը նշանավորվեց նաև դոնորների հետ տարված արդյունավետ աշխատանքով. ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացին իրենց աջակցությունը ցուցաբերելու պատրաստակամություն հայտնեցին Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպանատունն ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ արդյունավետ համագործակցությունը ևս շարունակվել է, ինչի արդյունքում ի թիվս իրականացված կոնֆերանս զանգերի և նամակագրության, հունիսին կայացավ նաև ԲՇԽ-ի անդամների կարողությունների ամրապնդմանը միտված աշխատաժողով ԱՃԹՆ միջազգային քարտուղարության ներկայացուցչի կողմից:

Եռամսյակը նշանավորվեց նաև ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով նախատեսված մի շարք ուսումնասիրությունների մշակման աշխատանքների մեկնարկով. Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզ, Օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրություն, ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրություն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության 2017-2018թթ. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների վերաբերյալ պետք է ներկայացվեն եռամսյակային հաշվետվություններ, որոնք հաստատվում են ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-Ի 2017-2018ԹԹ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում

Միջոցառում 4. ԱՃԹՆ կայքի համալրում համապատասխան տեղեկատվությամբ (հաշվետվությունների, տեսագրությունների, արձանագրությունների հրապարակում կայքում)

Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքի ԱՃԹՆ-ի ենթաէջը հաշվետու ժամանակահատվածում մշտապես թարմացվել է, ներկայացվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն հայերեն և անգլերեն լեզուներով:

Միջոցառում 5. Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում

Հայաստանի Հանրային հեռուստաընկերությամբ եթեր հեռարձակվող «Հրապարակում» հաղորդման շրջանակներում շարունակվել է «Թափանցիկ հանքարդյունաբերություն» հաղորդաշարը, որի նպատակն է հանրությանը իրազեկել Հայաստանում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության ներդրման աշխատանքների մասին, լուսաբանել Հայաստանի ԱՃԹՆ-ի մարզային հանդիպում-քննարկումները, ներկայացնել Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի անդամներին, Հայաստանի ԱՃԹՆ-ի գործընթացին աջակցող միջազգային գործընկերներին, ինչպես նաև ոլորտում ներգրավված մասնագետների կարծիքները նախաձեռնության և դրանից ակնկալվող օգուտների վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում եթեր է հեռարձակվել 5 հաղորդում.

Հաղորդում 5[1]. ԱՃԹՆ-ի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով մարզային հանդիպում Վանաձորում

Հաղորդում 6[2]. Քաղաքացիական հասարակության դերը ԱՃԹՆ-ի գործընթացում, հարցազրույցներ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամներ Սոնա Այվազյանի և Արթուր Գրիգորյանի հետ

[1] https://youtu.be/enjxuZuZKVw
[2] https://youtu.be/qqomeHwRPVI

Հաղորդում 7 [3]. Հարցազրույցներ Հայաստանի ԱՃԹՆ-ի միջազգային գործընկերների՝ Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպան Ջուդիթ Ֆարնուորթի և Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակի տնօրեն Լորա Բեյլիի հետ

Հաղորդում 8 [4]. ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչ Դիվեկե Ռոգանի այցի և հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման ու ԱՃԹՆ-ի զեկույցի ներկայացման վերաբերյալ աշխատաժողովի լուսաբանում

Հաղորդում 9[5]. Հարցազրույցներ Հայաստանի ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի կառավարության խմբակցությունը ներկայացնող անդամներ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Դավիթ Անանյանի և ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանի հետ

Իրազեկման բարձրացման միջոցառումների շրջանակում նախատեսվում է սոցիալական տեսահոլովակների պատրաստումը և տարածումը: Այդ նպատակով ՀՀ կառավարության կողմից հայտարարվել է մրցույթ, սակայն մրցույթին հաղթող չի ճանաչվել:

Միջոցառում 6. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ քարոզչության իրականացում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով

Շարունակվել են պարբերաբար թարմացվել Facebook[6], YouTube[7] և Twitter[8] ցանցերում ստեղծված Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը, որոնցում հրապարակվում է ԱՃԹՆ-ի ներդրման և ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն՝ ապահովելով դրա հասանելությունը լայն հանրության համար:

Միջոցառում 7. Հաղորդակցության ռազմավարության[9] *մշակում*

[3] https://youtu.be/s18wbG-DakY
[4] https://youtu.be/Yo5_sAOSiw0
[5] https://youtu.be/UNzv9ztZcgk
[6] https://www.facebook.com/EITIArmenia/
[7] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A
[8] https://twitter.com/EITI_Armenia
[9] Հեռահաղորդակցության ռազմավարությունը 2017 թ. մայիսի 5-ի նիստի ընթացքում վերանվանել է «Հանրային հաղորդակցության ռազմավարության»:

Հայաստանում ՄԹ դեսպանատան ֆինանսավորմամբ Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը (ՊՀԿ) սկսել է հանրային հաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքները: ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ-ի պատասխանատուների, ԲՇԽ-ի աշխատանքային խմբի և հասարակական հիմունքներով ներգրավված փորձագետի կողմից մշակված աշխատանքային նախագիծը տրամադրվել է ՊՀԿ փորձագետներին: Ռազմավարության մշակման աշխատանքներին նախատեսվում է նաև հանրային հաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքային խմբի ակտիվ ներգրավվածություն: Հանրային հաղորդակցության ռազմավարության վերջնական փաստաթուղթը պատրաստ կլինի երրորդ եռամսյակում (2017 թ. օգոստոս):

Միջոցառում 9. Իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացում

Հաշվետու ժամանակահատվածում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցութամբ Հայաստանի ԱՃԹՆ-ի գործընթացի վերաբերյալ իրազեկության բարձրացման նպատակով մարզային երկու հանդիպումներ են տեղի ունեցել Լոռու և Սյունիքի մարզերում: Ապրիլի 14-ին Լոռու մարզպետարանում [10] կազմակերպվել էր հանդիպում ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի անդամների և համայնքապետերի, մարզի քաղաքացիական հասարակության ու հանքարդյունահանող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Ապրիլի 21-ին Կապանի քաղաքապետարանում [11] կայացած հանդիպման ժամանակ Հայաստանի ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի անդամները հանդիպել են Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և հանքարդյունահանող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել է ԱՃԹՆ-ի միջազգային ստանդարտը, դրա պահանջները, ինչպես նաև ԱՃԹՆ-ի ներդրման հայաստանյան գործընթացը: Հանդիպումներն անցել են ակտիվ քննարկումների մթնոլորտում:

ԱՃԹՆ-ի գործընթացում հանրության ավելի լայն շրջանակ ընդգրկելու նպատակով իրականացվում են ԱՃԹՆ-ի ստանդարտի թարգմանության աշխատանքներ:

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ ՀՀ կառավարության

[10] https://www.youtube.com/watch?v=uZqa2KjYoY0&feature=youtu.be
[11] https://www.youtube.com/watch?v=FxreAltqydU

աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի վերաբերյալ նախորդ եռամսյակում տպագրված տեղեկատվական թերթիկները տարածվել են ԲՇԽ-ի անդամների մարզային հանդիպումների, ինչպես նաև հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականության բացահայտման և Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) զեկույցի ներկայացման վերաբերյալ աշխատաժողովի ընթացքում:

Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում

Միջոցառում 11. Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ համագործակցության շրջանակներում ՎԶԵԲ-ի լոնդոնյան գրասենյակի կողմից պատրաստակամություն է հայտնվել ցուցաբերել տեխնիկական աջակցություն ԱՃԹՆ-ի անդամ մի շարք երկրներում, այդ թվում Հայաստանում՝ իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքներին, մասնավորապես, իրական սեփականատերերի բացահայտման հարցերով խորհրդատուի (փորձագետի) ներգրավվելու միջոցով: Համապատասխան փորձագետի ներգրավման համար մշակվել է տեխնիկական առաջադրանքի նախագիծ, որի առնչությամբ ԲՇԽ-ի անդամներից ստացված կարծիքները և մեկնաբանությունները ինտեգրվել են նախագծում: Ներկայում փորձագետի ներգրավման աշխատանքներն ընթացքի մեջ են:

ՀՀ իրավական դաշտի ուսումնասիրություն, ԱՃԹՆ-ին անհամապատասխանությունների և բացերի բացահայտում

Միջոցառում 15. ԲՇԽ-ի կողմից տեխնիկական առաջադրանքի կազմում, որի համաձայն տեղական և միջազգային խորհրդատուները կիրականացնեն ուսումնասիրություն անհամապատասխանությունների բացահայտման նպատակով

Հայաստանում ՄԹ դեսպանատան ֆինանսավորմամբ Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը (ՊՀԿ) սկսել է

օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության աշխատանքները: Մասնավորապես, ՊՀԿ-ի կողմից մշակվել և ԲՇԽ-ի կողմից հաստատվել է ՄԹ փորձագետի տեխնիկական առաջադրանքը: Ուսումնասիրության շրջանակում ՊՀԿ փորձագետները իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ օրենսդրության մասով ակտիվորեն համագործակցելու են ՎԶԵԲ փորձագետի հետ: Ուսումնասիրության աշխատանքներում կներգրավվի նաև օրենսդրական դաշտի ուսումնասիրության և անհամապատասխանությունների բացահայտման աշխատանքային խումբը: Ներկայում իրականացվում են փորձագետի ներգրավման աշխատանքներ:

Լավագույն միջազգային փորձի ուսումնասիրություն և ԱՃԹՆ-ին և պատասխանատու հանքարդյունաբերության լավագույն միջազգային փորձին համապատասխանեցման ճանապարհային քարտեզի մշակում

Միջոցառում 19. Տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում

Հայաստանում ՄԹ դեսպանատան ֆինանսավորմամբ Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը (ՊՀԿ) օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության, ինչպես նաև 2018 թվականի ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման նպատակով նախնական ուսումնասիրության շրջանակներում քննելու է պատասխանատու հանքարդյունաբերության լավագույն միջազգային փորձին համապատասխանեցման տարրեր: Մասնավորապես, քննարկվելու են կոնկրետ բարեփոխումներ, որոնք կարող են մեծ ազդեցություն ունենալ պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ձևավորման վրա: Ուսումնասիրվելու է նաև պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ստեղծման ազդեցությունը, այդ թվում՝ ներդրումների խթանման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման համատեքստում:

Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության կարգավիճակի ապահովում

Միջոցառում 38. Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն

ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ-ի պատասխանատուները հանդիպումներ են ունեցել գործընկեր միջազգային կազմակերպությունների, մասնավորապես, Հայաստանում Բրիտանական դեսպանատան, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ, որոնց հետ քննարկվել են ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի իրականացմանն ուղղված աշխատանքներին միջազգային կազմակերպությունների մասնակցության հնարավոր ուղղությունները:

2017 թ. հունիսին Համաշխարհային բանկի հանքարդյունաբերության ոլորտի գլխավոր մասնագետ Քրիսթեն Հունդի և ՀՀ արդարադատության նախարար, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահ Դավիթ Հարությունյանի հանդիպման ընթացքում քննարկվել են Համաշխարհային բանկի դրամաշնորհներից օգտվելու հնարավորությունները:

ՎԶԵԲ-ի ԱՃԹՆ-ի իրական սեփականատերերի բացահայտման օժանդակության ծրագիրը կենտրոնանում է իրական սեփականատերերի բացահայտման պահանջների իրականացման վրա ԱՃԹՆ-ի մինչև 7 անդամ երկրներում: Այդ երկրներն են Հայաստանը, Ադրբեջանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոնղոլիան, Տաջիկստանը և Ուկրաինան: Ծրագիրը կիրականացվի ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ համագործակցությամբ: Ծրագրի շրջանակներում Հայաստանի համար իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման համար փորձագետի (խորհրդատուի) ներգրավման աշխատանքներն ընթացքի մեջ են:

ԱՃԹՆ-ի շրջանակներում միջազգային համագործակցության արդյունավետության բարձրացման նպատակով օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչներին ԱՃԹՆ-ի գործընթացի վերաբերյալ արդիական և համակողմանի տեղեկատվությամբ ապահովելու համար մշակվել է Հայաստանում ԱՃԹՆ-ի գործընթացի ներդրման վերաբերյալ տեղեկանք: Ս.թ. հուլիսի 12-ին տեղեկանքը ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից ուղարկվել է Հայաստանի Հանրապետության 18 պետություններում դիվանագիտական ներկայացուցչություններին՝ ԱՃԹՆ-ի տվյալ պետությունների պատասխանատուների հետ համագործակցության հաստատման նպատակով:

Միջոցառում 42. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների, գործողությունների պլանի մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունների կազմում (եռամսյակային, կիսամյակային, տարեկան)

Հաշվետու ժամանակահառվածում մշակվել և հաստատվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների հունվար-մարտ ամիսների հաշվետվությունը[12]: Կազմվել, հաստատվել և հրապարակվել են ԲՇԽ-ի նիստի արձանագրությունը[13], առաջիկա եռամսյակի գործողությունների ծրագիրը[14], ժամանակացույցը և համապատասխան այլ փաստաթղթերը:

Միջոցառում 43. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և այլ ԱՃԹՆ անդամ երկրների հետ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ-ի պատասխանատուները համագործակցել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տարածաշրջանային պատասխանատուների հետ Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման և ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի միջոցառումների իրականացման հետ կապված մեկնաբանությունների և խորհրդատվության ստացման նպատակով: Կազմակերպվել են կոնֆերանս զանգեր, իրականացվել է նամակագրություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ:

Մայիսի 19-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տարածաշրջանի պատասխանատուների, ԱՃԹՆ-ի խորհրդի անդամի և այլընտրանքային անդամի, տարածաշրջանի ԱՃԹՆ-ի անդամ երկրների ԱՃԹՆ-ի պատասխանատուների մասնակցությամբ տեղի ունեցավ տեսակամուրջ-քննարկում, որի հիմնական նպատակն էր ԱՃԹՆ-ի զեկույցներում ներկայացվող տվյալների ապաագրեգացման աստիճանի, մասնավորապես, տվյալները ըստ հանքարդյունաբերական ծրագրերի (թույլտվությունների, լիցենզիաների) ներկայացման հնարավորության, օրենսդրական և հարկային ռեժիմների սահմանափակումների և այլ հարցերի քննարկումը:

ՀՀ ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի անդամների կարողությունների զարգացման նպատակով 2017 թ. հունիսի 6-7-ը կազմակերպված աշխատաժողովի ընթացքում ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչ, Քաղաքականության և տարածաշրջանային տնօրեն Դիվեկե Ռոգանը լուսաբանել է իրական սեփականությանը և նախնական ուսումնասիրությանն առնչվող հարցերը[15], որին բացի

[12] http://gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_1st_Quarter_progress_report_and_logo_use_guide.pdf
[13] http://gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_meeting_minute_05%2005%202017.pdf
[14] http://gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/EITI_ARMENIA_Work_Schedule_May_July_and_working_groups.pdf
[15] https://youtu.be/rgjb6vXW8SY

ԲՇԽ անդամներից մասնակցել են նաև շահագրգիռ կողմերի այլ ներկայացուցիչներ ՀՀ արդարադատության, ՀՀ բնապահպանության, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ ֆինանսների, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություններից, ՀՀ կենտրոնական բանկից, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովից, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունից, Հայաստանի ամերիկյան համալսարանից, «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնից, «Էկոիրավունք» հասարակական կազմակերպությունից:

Միջոցառում 47. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի ձևավորում[16]

2017 թ. մայիսի 5-ին կայացած ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի նիստի ընթացքում ձևավորվել են երեք աշխատանքային խմբեր՝ ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության աշխատանքային խումբ, օրենսդրական դաշտի ուսումնասիրության և անհամապատասխանությունների բացահայտման աշխատանքային խումբ, իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքային խումբ (հանրային հաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքային խումբը ձևավորվել էր ավելի վաղ): Մայիսի 23-ին կայացել է Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքային խմբի անդրանիկ հանդիպումը, որի ընթացքում ընդհանուր առմամբ ներկայացվել է աշխատանքների իրականացման տրամաբանությունը: Մայիսի 30-ին կայացած ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության (scoping study) աշխատանքային խմբի հանդիպումը ևս միտված էր կատարվելիք աշխատանքների ներկայացմանը և քննարկմանը: Կազմավորված աշխատանքային խմբերը (այդ թվում՝ ԱՃԹՆ-ի հանրային հաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքային խումբ) արդյունավետորեն համագործակցելու են Հայաստանի ամերիկյան համալսարանի ՊՀԿ-ի և ՎԶԵԲ-ի փորձագետների հետ:

ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամների առաջարկությամբ հունիսի 5-ին կայացած ԲՇԽ-ի աշխատանքային հանդիպման ընթացքում քննարկվեց ԲՇԽ-ի մոտեցումը քաղաքացիական հասարակության խմբակցության նոր անդամի ընտրության և շահերի բախման հարցերի շուրջ:

[16] Հավելված 1-ում ներկայացված են աշխատանքային խմբերի կազմերը

ԱՃԹՆ ստանդարտին համապատասխան ամբողջական հաշվետվություն

Միջոցառում 50. ԱՃԹՆ զեկույցի նախնական ուսումնասիրություն

Հայաստանում ՄԹ դեսպանատան ֆինանսավորմամբ Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը (ՊՀԿ) սկսել է զեկույցի նախնական ուսումնասիրության աշխատանքները: Մասնավորապես, ՊՀԿ-ի կողմից մշակվել և ԲՇԽ-ի կողմից հաստատվել է ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքը: Ուսումնասիրության աշխատանքներում կներգրավվի նաև ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության աշխատանքային խումբը: Ներկայում իրականացվում են փորձագետի ներգրավման աշխատանքներ:

Միջոցառում 51. Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակում

Հայաստանում ՄԹ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրի շրջանակներում նախատեսված են նաև ակախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակումը, որը կիրականացվի զեկույցի նախնական ուսումնասիրության մշակումից հետո:

Միջոցառում 59. Թարգմանչական աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ նախաձեռնվել և իրականացվել է ԱՃԹՆ-ի ստանդարտի հայերեն թարգմանությունը: Ներկայումս ստանդարտի հայերեն տարբերակը խմբագրման փուլում է, որից հետո ԲՇԽ-ի անդամների կողմից վերջնական հաստատված հայերեն տարբերակը ստանալուց հետո այն կտեղադրվի Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքի ԱՃԹՆ-ի ենթաէջում, հնարավորության դեպքում՝ նաև ԱՃԹՆ միջազգային պաշտոնական կայքում:

Հավելված 1

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-Ի ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԵՎ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Հանրային հաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքային խումբ

1.	Խաչիկ Հակոբյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	hakobyankhachik@gmail.com, khachik.hakobyan@mnp.am
2.	Վահե Վարդանյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	vahe.vardanyan@gmail.com
3.	Ինգա Զարաֆյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	ingazarafyan@gmail.com
4.	Լուսինե Թովմասյան, ՀՀ ԿԱ ԱՃԹՆ-ի փորձագետ	lusine.tovmasyan@gov.am
5.	Դավիթ Շինդյան, ՀՀ ԿԱ ԱՃԹՆ-ի փորձագետ	davit.shindyan@gov.am
6.	Աննա Սաղաբալյան, անկախ փորձագետ	Anna.Saghabalyan@lydianinternational.co.uk
7.	Գայանե Ղազարյան, անկախ փորձագետ	gajanehk@yahoo.com

Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքային խումբ

1.	Դավիթ Անանյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	davit.ananyan@minfin.am
2.	Վարդան Գևորգյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	vardan.gevorgyan.g@gmail.com, vgevorgyan@minenergy.am

3.	Արմեն Ստեփանյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	armen@lydianinternational.co.uk
4.	Արթուր Նիկողոսյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	anikoghosyan@geopromining.com, a.nikoghosyan@geopromining.com
5.	Սոնա Այվազյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	sona@transparency.am
6.	Լուսինե Թովմասյան, ՀՀ ԿԱ ԱՃԹՆ-ի փորձագետ	lusine.tovmasyan@gov.am
7.	Դավիթ Շինդյան, ՀՀ ԿԱ ԱՃԹՆ-ի փորձագետ	davit.shindyan@gov.am

ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության (scoping study) աշխատանքային խումբ

1.	Տիգրան Խաչատրյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	tkhachatryan@mineconomy.am
2.	Կարեն Իսախանյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	k.isakhanyan@mta.gov.am
3.	Արմեն Ստեփանյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	armen@lydianinternational.co.uk
4.	Հարություն Մովսիսյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	harutyunmovsisyan84@gmail.com
5.	Արթուր Գրիգորյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	art.grigorian@gmail.com
6.	Լուսինե Թովմասյան, ՀՀ ԿԱ ԱՃԹՆ-ի փորձագետ	lusine.tovmasyan@gov.am
7.	Դավիթ Շինդյան, ՀՀ ԿԱ ԱՃԹՆ-ի	davit.shindyan@gov.am

	փորձագետ	
8.	Սամվել Ռուբենյան, անկախ փորձագետ	samvel.rubenian@gmail.com

Օրենսդրական դաշտի ուսումնասիրության և անհամապատասխանությունների բացահայտման աշխատանքային խումբ		
1.	Դավիթ Անանյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	davit.ananyan@minfin.am
2.	Վարդան Գևորգյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	vardan.gevorgyan.g@gmail.com, vgevorgyan@minenergy.am
3.	Պերճ Խաչատրյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	pertsh.khachatryan@zcmc.am
4.	Արթուր Համբարձումյան, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ	artur.hambardzumyan.69@mail.ru
5.	Լուսինե Թովմասյան, ՀՀ ԿԱ ԱՃԹՆ-ի փորձագետ	lusine.tovmasyan@gov.am
6.	Դավիթ Շինդյան, ՀՀ ԿԱ ԱՃԹՆ-ի փորձագետ	davit.shindyan@gov.am